

Այդպիսով Հայերն ու Քիւրդերը պիտի ապրին իրենց փա-
ղափակբութեան աստիճանական չափերու հետեւանով, կազմե-
լով պետութեան առանձին մասերը անոր ամբողջականութեան մէջ:

Բացի այդ, Հայ նոր սերունդը նախապաշարուած
չքողնելու համար Քիւրդերու նկատմամբ, արժեք որ պատմա-
կան այս համառոտութիւնը իբրեւ Հայրենագիտութեան մաս-
մունք գործէր նաեւ մեր դպրոցները: Այս յաջողութիւնը յոյս պիտի
ներշնչէր ինձ նոր նախապահորդութեամբ եւ աւելի ընդարձակ
ուսումնասիրութեամբ տալ երկրորդ տպագրութիւնը, ու քաղ-
մանել Քիւրդերէնի, որպէսզի լայն ծաւալով ծառայէր երկու
ժողովուրդներու մեծացման, բարեկամութեան ու ինքնագի-
տակցութեան: